



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈՉԸ ԱՐՏԱՍՍՆՈՒԱԾ
ՍՈՒՐԲ Էջմիածնի ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ
(15 ապրիլ 1990 թ.)**

**«Յանուն Հօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ, ամեն»:
«Քրիստո յարեա ի Խոնելոց», ձեզ և մեզ մեծ աւետիս:**

Սիրեցեալ հաւատացեալներ Մեր ի Հայատան և ի ափիոս աշխարհի,
Այսօր Ամենայն Հայոց Սուրբ Խօմիածնեն, բերում ենք բոլորիդ հրա-
շալի աւետիսը թէ՝ ճշմարտապէս «յարեա Քրիստո ի մեռելոց և մեզ
զկեանս պարզենաց»:

Այսօր լուսաւորում են աշխարհի բոլոր հորիզոնները Սուրբ Յարտր-
եամ շնորհներով, զի Քրիստոսի ամենափրկիչ աւետիսը զովերգում են
երկնքի հրեշտակները, իսկ երկրի վրայ փառաբանում են բոլոր չուսացեալ
մարդկանց հոգիները:

Այսօրուայ տօնը մեր խրտերում արթնացնում է այն անասեի ուժա-
խորհինը զոր ասպեցին խղաքնը կանաք, Յիսուսի դատարկ գերեզմանի
առաջ: Սրթնացնում է այն փրկարար յոյսը թէ՝ «որպէս Աղաման ամենե-
քին մեռանին, նոյնպէս և Քրիստոսով ամենեցեան կենդանացին» (Ա.
Կորնթ. ԺԵ 22):

Մեր յոյսը մելառվ հանդերձ յարոցեալն Քրիստոս, այսօր չենք կարող
չտեսնել այն վերիվայրումները, այն փորորիկները որ կուտակում են աշ-
խարհի ճանապարհների վրայ: Հետզինուէ զավի է դատնում թէ մեր երկ-
րագունդը զլուրում է դեպի ողորտը աւելի տագեապալի իրավիճակների,
ոյի ամեն տեսակի անհայտեսելի հեռանկարներով:

Յաճախ մղում ենք մտածելու թէ մեր օրերի մարդկութիւնը չի կարող
ինքն իրեն ղեկավարել բաւարար իմաստոքեամբ: Ներկան անապահով
է, իսկ ապագան անորոշ: Դեպի ո՞ւր է զնում մարդկային աշխարհ...:

Այս կացութեանց առաջ կանգնած, արդեօք ժամանակը չէ՝ որ հին

խոստումներից յուսախարք բազնութիւնները, իրենց դէմքը դարձնեն դէափի դատարկ գերեզմանը Յիսուսի, դէափի լոյսերը այդ գերեզմանից ճառագող: Մեր աղերսն է այսօր, որ Քրիստոս նոր լոյս սփորի մեր օրերի՝ նոր ուղիներ որոնող մարդկութեան վրայ, զի նա յաւետ մնում է «ճանապարհ, ճշշմարտութիւն և կեանք» (Յովհ. ԺԴ 6):

Մեր օրերի ալեկոծ աշխարհի չքերի վրայ նաևարկում է նաև մեր փոքը ազգի դիւրաբեկ նար ի Հայաստան, որ գոյատևում է մեր ժողովրդի մայր զանգուածը: Հայաստան, քար ու լոյս մեր աշխարհը, որ հայերը ապրում են ու մաքառում իրենց նախնեաց քրիստոնէական հաւատքով, իրենց ազգային ինքնութեան գիտակցութեան նոր զարթօնքով, իրենց կապոյն երազանքներով, իրենց՝ ինքնիշխան ու ազատ ապրեկու կամքով:

Քրիստոսի Յարութիւնից յատոյ, Սուրբ Հոգոյ էջքը հրեղէն լեզուներով՝ առաքեալների ու ազգերի վրայ, խորհրդանշում է ոչ միայն գաղափար՝ Եկեղեցոյ մէջ բոլոր ազգերի միաւորման ու Եղբայրութեան, այլև աստուածային կամքը և տնօրինումը՝ որ ազգութիւնների փոխադարձ սիրոյ միութեան մէջ, անայածու պահպանուի ամէն մի անհատ մարդու և ամէն մի ազգութեան ոգեկան ինքնութիւնը, շնորհուած բոլորին հաւասարապէս Սուրբ Հոգոյ ճառագայթումով:

Այս դաւանանքը եղել է ու մնացել նաև մեր Մայր Եկեղեցու, մեր ազգային Եկեղեցու գոյառման և պատմական զարգացման ուղին:

Քրիստոսի Եկեղեցին տիեզերական է, և Հայ Առաքելական Եկեղեցին իր ազգի սահմանների մէջ իրականացնում է այդ տիեզերականութիւնը ստեղծագործուն, իրեն յատուկ ազգային ինքնուրոյն ձևերի մէջ:

Զի իրեն ազգութիւն, այսինքն՝ իրեն ոգեկան, մշակութային և բարուական գոյառում, մեր ժողովուրդը ծնունդ է առել ու Կազմաւորուել Քրիստոսի Յարութեան լոյսի դրոշմամբ և պատմականօրէն մարմին առել ու բիւրելացել, մեր ազգային Եկեղեցու ու ազգային մշակոյթի անկորնչելի արժեքներով:

Բոլոր լոյսերի լուսաբացի այս զատկական առաւօտեան, երբ մեր ողջ ազգը ինք ևս, ի Հայաստան և յարտասահման, տառապում է արդարութեան ծարաւով, Մենք մեր աղօթքն ենք վերառաքում առ Փրկիչն մեր Քրիստոս որ լուսաւորի նրա ճանապարհը և զօրացնի նրա զաւակների սիրուն ու հոգին իր կենարար Յարութեան շնորհներով, զի «Երանի որ բաղեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» (Մատթ. Ե 6):

Արդ, սիրեցեալ ժողովուրդ մեր, Փրկիչն մեր Քրիստոսի լոյս յարութեամբ «Բնաւատով արդարացուած, խաղաղութիւն ունենանք Աստուծոյ նետ... այլ պարծենանք մեր նեղութիւնների մէջ ևս, քանզի գիտենք որ նեղութիւնները՝ համբերութիւն են բերում, համբերութիւնը՝ փորձ, փորձը՝ յոյս: Եւ քոյս երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստուծոյ սէրը սփոռուած է մեր սրտերում Սուրբ Հոգոյ միջոցով» (Հովմ. Ե 1—5):

Շնորհը յարուցեալ Փրկիչն մերոյ Յիսուսի Քրիստոսի նոյնիցին ընդ ձեզ. ամէն: